ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ, Զեյթունի պատմությունը 1409—1921 թթ., Երևան, Հայաստան հրատարակչություն, 1969, 457 էջ, գինը՝ 1 ռ. 57 կոպ.:

Հ. Մ. Պողոսյանը իր առաջ շնորհակալ, բայց և դժվար խնդիր է դրել բազմակողմանիորեն ուսումնասիրել Զեյթունի պատմությունն սկզբից մինչև 1921 թ. իրադարձությունները։ Հեղինակը տարիներ շարունակ աշխատել է հանրապետության արխիվներում, Մատենադարանի ֆոնդերում և շրջանառության մեջ է դրել մի շարք նոր փաստաթղթեր ու վավերագրեր։

Առանձնապես պետք է ընդգծել այն, որ աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձված զեյթունցիների կենցաղի, նիստ ու կացի, բարքերի ու սովորությունների և ազգագրական այլ մանրամասնությունների վրա, որոնք հստակ պատկերացում են տալիս հայ լեռնականների մասին։

Աշխատության ներածական մասում քննության են առնված պատմագրության հարցերը։ Հեղինակը վերլուծման է ենթարկել գրեթե այն բոլոր գրքերն ու հուշագրությունները, որոնք առնչվում են Զեյթունի պատմության հետ։ Սովետահայ պատմաբաններից հեղինակը հիշատակում է ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանի, Աշ. Հովհաննիսյանի, պրոֆ. Վ. Պարսամյանի և պատմ. գիտ. դոկտոր Հ. Ղազարյանի ուսումնասիրությունները։ Այդ աշխատությունները, սակայն, նպատակ չեն ունեցել տալու Զեյթունի ամբողջական պատմությունը, այլ լուսաբանել են առանձին հարցեր պատմական որոշակի շրջանակներում։

Աշխատության առաջին և երկրորդ գլուխներում քննության է առնված Զեյթունի սոցիալ-տնտեսական իրավիճակը XIX դարի առաջին կեսին։ Մատենագրական աղբյուրների հիման վրա Հ. Պողոսյանը փորձել է ճշտել Զեյթուն անվան ծագումը։ Ըստ կարելվույն բացահայտված է Լեռնային Կիլիկիայում ապրող զեյթունցիների հեռավոր դարերի ընդհանուր պատմությունը։ Հեղինակը իրավացի է, երբ նշում է, որ Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո այնտեղի բնակչության սոցիալ-քաղաքական շարժումների պատմությունը թաղվել է թանձր մշուշի մեջ. դժվար է տարբերել իսկական պատմությունը առասպելականից և ավանդականից։ Սակայն հեղինակը ջանացել է սկզբնաղբյուրների հիման վրա ընդհանուր դաղափար տալ այդ շրջանի իրադարձությունների մասին։

Աշխատության երրորդ գլխում խոսվում է զեյթունցիների կիսանկախության, անկախությունը պահպանելու համար XIX դարի առաջին կեսին մղված զինված ելույթների և բազմաթիվ հարակից հարցերի մասին։

Հայտնի է, որ XVIII դարի 80-ական թթ. սկսած Մարաշի կուսակալ փաշաները կազմակերպված զորաջոկատներով և բաշիբոզուկների խմբերով բազմաթիվ արշավանքներ են կատարել հայ լեռնականների վրա։ Սակայն դժվար չէ նկատել, որ այդ բոլոր զինված ելույթներում, ինչպես նշում է հեղինակը, գրեթե միշտ հաղթող են դուրս եկել զեյթունցիները, թեև հնարավոր է, որ այդ հաղթական կռիվներից որոշ դեպքեր հուշագրողները չափազանցնում են։ Սակայն կարևորն այն է, որ այդ արժվարությունը՝ Զեյթունը, Կիլիկիայում օսմանյան բռնակալության հաստատումից ի վեր, ավելի քան չորս դար շարունակ, պահպանում էր իր կիսանկախությունը, կառավարվում իր ներքին օրենքներով։

Գրքում բացահայտված է օտարերկրյա կաթոլիկ միսիոներների և Կոստանդնուպոլսի հայ կաթոլիկ համայնքի գործունեությունը։ Նրանք մեծ ջանքեր էին գործադրում դավանափոխ անելու ոչ միայն Կիլիկիայում—Զեյթունում, այլև մյուս նահանգներում ապրող հայությանը։ Հասունյանները պատրանք էին ստեղծել, թե ֆրանսիական կառավարությունը, Նապոլեոն III-ի գլխավորությամբ, պաշտպան է կանգնելու Կիլիկիայի հայությանը, եթե նրանք կաթոլիկություն ընդունեն։

Հեղինակը ճիշտ է նկատում, որ հայ դեմոկրատական հոսանքը, հայ առաջավոր մտավորականությունը վճռական պայքար էր մղում օտարոտի կրոնական աղանդների դեմ, որոնք պառակտում էին հայության հավաքական գոյությունը՝ սպառնալով հայապահպանությանը։

Բնորոշ փաստերով վեր են հանված Զեյթունի 1862 թ. ապստամբության բուռն արձագանքները հայության երկու հատվածներում,

արտասահմանի հայ գաղթավայրերում և այլուր։

Եթե Զեյթունի պատմությամբ զբաղվող շատ հեղինակներ քիչ ուշադրություն են դարձրել Տավրոսի հայ բնակչության 1870—1880-ական թթ. ապստամբական ելույթների վրա, ապա գրախոսվող աշխատության հեղինակը մանրամասն լուսաբանել է այդ շրջանի պատմությունը։ Հեղինակը հիշտ է նկատում, որ Կիլիկիայի—Զեյթունի գինված ելույթները բռնկվեցին այն ժամանակ, երբ սկսվել էր 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը։ Մի շարք փաստեր են բերված, որոնք հաստատում են, որ ռուսական բանակի հրամանատարությունը փորձում էր օգնել գինված ապստամբության դրոշ պարզած հայ բնակչությանը։ Սակայն Թուրքիայում տեղի ունեցած նոր իրադարձությունների հետևանքով ռուսական բանակը հնարավորություն չունեցավ ռազմական ու նյութական օգնություն ցույց տալ հնարավոր Կիլիկիայի ապստամբներին։

Ուշադրության արժանի է աշխատության նաև նախավերջին գլուխը, որտեղ խոսվում է Զեյթունի հերոսական պատմության ամենափառավոր էջերից մեկի՝ 1895—1896 թթ. դյուցազնամարտի մասին։

1890-ական թթ. օսմանյան կառավարությունը իրականացնում էր սուլթան Համիդ II-ի ծրագիրը՝ ոչնչացնել հայությանը։ Յաթաղանին զոհ գնաց ավելի քան 300 հազար մարդ։ Գրքում զգալի տեղ է տրված հայաշատ վայրերի դիմադրական շարժման պատմությանը։ Զինյալ պաշտպանության շնորհիվ հայ բնակչության մի ստվար մասը փրկվեց կոտորածներից։ Առանձնապես մանրամասն լուսաբանված է զեյթունցիների 1896 թ. 40-օրյա հերոսական դիմադրությունը, որի շնորհիվ Տավրոսի հայ լեռնականները ազատվեցին կոտորածներից։

Եզրափակիչ գլխում պարզաբանված են 1915—1921 թթ. Կիլիկիայում տեղի ունեցած բարդ իրադարձությունները։ Ֆրանսիական բանակի կողմից Կիլիկիայի օկուպացումը 1915—1918 թթ. տարագրված հայության մի զգալի մասին հնարավորություն տվեց վերադառնալ հայրենի բնակավայրերը։ Սակայն Ֆրանսիան, քաղաքական նկատառումներով, թողեց Կիլիկիան, և վերահաստատված հայ բնակչությունը մնաց բախտի քմահաճույքին։ Կիլիկիահայությունը այս անգամ հարկադրված էր կենաց ու մահու կռիվ մղել թուրքական հորդաների դեմ։

Հեղինակը ուշի-ուշով քննության է առել 1919—1921 թթ. Մարաշի, Հաճընի, Զեյթունի, Ֆոնուղի, Ադանայի և այլ հայաշատ վայրերի ինքնապաշտպանական կռիվները։ Կիլիկիահայությունը մեկ անգամ ևս տվեց սխրագործությունների փայլուն օրինակ։ Սակայն ուժերն անհավասար էին, իմպերիալիստական պետությունները կրկին դավաճանեցին հայությանը։ Քեմալական բանակը գրավեց Կիլիկիան։ Վերահաս կոտորածներից ազատված բնակչությունը ցիրուցան եղավ աշխարհի բոլոր կողմերը։

Ինչպես վերևում նշեցինք, գրախոսվող աշխատության հեղինակը նշանակալից գործ է կատարել և ըստ կարելվույն փորձել է ամբողջացնել Զեյթունի հարուստ պատմությունը։

Սակայն գրքում կան որոշ փաստական անճշտություններ, հակասական և սխալ մտքեր, կարևոր հարցերի անբավարար վերլուծություն և այլն։

Գրքում մեծ տեղ է հատկացված Զեյթունցու (Մնացական Սեմերճյան) «Զեյթունի անցյալն և ներկայնն» երեք մասից բաղկացած հուշագրությանը։ Հեղինակը այդ աշխատությունը սկզբնաղբյուր է համարում։ Ինչպես հայտնի է, Մ. Սեմերճյանը Զեյթունի 1862 թ. և նախորդ հերոսամարտերի պատմությունը գրի է առել 1900 թ., իսկ XIX դարի վերջերի ինքնապաշտպանական կռիվների մասին նա գրել է ուրիշների պատմածների հիման վրա։ Տավրոսի լեռնականների պատմությունն ուսումնասիրելիս, անշուշտ, պետք է օգտագործել Զեյթունցու այդ կարևոր հուշագրությունները, բայց չպիտի անտեսել նրանցում եղած փաստական սխալները և հակասությունները։ Մինչդեռ հեղինակը չի օգտվել Աղասու (Թուր-Սարգսյան) ուշադրության արժանի հուշագրությունից (այն ականավոր գրականագետ Ա. Զոպանյանը թարգմանել է ֆրանսերեն, որը լույս է տեսել 1897 թ., Փարիզում, իսկ հայերեն բնագիրը՝ «Զեյթունը և նրա շրջակաները», հրատարակվել է Բեյրութում, 1968 թ.)։

Հեղինակը գտնում է, որ Զեյթունի գավառում պահպանվել էին «...այն հասարակական սոցիալական կարգերը, որոնք գոյություն ունեին Կիլիկիայի թագավորության ժամանակ։ Ավելի հեռուն գնալով պնդում է, թե «...հայկական ֆեոդալական սիստեմը... նոր պայմաններում «վերակառուցվեց» և սկսեց ավելի նմանվել Եվրոպայում գոյություն ունեցող ֆեոդալական կարգերին» (էջ 55)։ Այսպիսով, եթե Զեյթունում էլ պահպանվել էին նույն սոցիալական կարգերը, որոնք գոյություն են ունեցել Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում, ապա այդ փոքրիկ գավառակում պետք է փնտրենք ճորտեր և ճորտատերեր։

Վկայակոչելով Կարապետ Ուլնեցուն, հեղինակը գրում է. «...Զեյթունի հայն ունեցել է մեծ քանակությամբ թթաստաններ։ Նա զբաղվել է մետաքսագործությամբ ու միաժամանակ բամբակ է մշակել։ Այդ մետաքսի ու բամբակի մի մասն անպայման նրանք վաճառել են գա-

վառից դուրս, իսկ մնացածը մշակել Զեյթունում» (էջ 29)։ Ուլնեցու հիշատակարանից բերված վկայության մեջ ոչ մի խոսք չկա այդ մասին։

Հեղինակը մի տեղ հիշատակում է, որ Զեյթուն դավառակի մեջ մտնում էին 29 գյուղ (էջ 37), իսկ մի քանի էջ հետո ավելացնում. «Դավառակը բաղկացած էր 32 գյուղերից» (էջ 40)։

Հ. Պողոսյանը գրում է. «Այս դեպքից 42 տարի հետո (նկատի ունի Զեյթունի իշխանների միջև ծագած խռովության տարիները՝ 1830—1832 թթ.— Վ. Մ.), երբ արդեն Կիլիկիայում հաստատվում է օսմանյան տիրապետությունը...» (էջ 61, ընդգծումը մերն է— Վ. Մ.)։ Ստացվում է, որ թուրքական տիրապետությունը Կիլիկիայում հաստատվել է անցյալ դարի 70-ական թթ., որ ակնհայտ վրիպում է։ Իսկ եթե հեղինակը այս տարեթիվը համարում է ճիշտ, ապա էլ ինչու է փորձում բանավիճել և «ապացուցել», թե XVI դարի սկզբին սուլթան Մուրադ Դ-ն իր հպատակ զեյթունցիներին արտոնությունների հրովարտակ է տվել (էջ 110—112)։

Մի քանի խոսք այդ հրովարտակի կեղծության մասին։ Հայտնի է, որ Զեյթունի պատմության հուշագրողներից միայն մեկը՝ Մ. Սեմերճյանն է իր «Զեյթունի անցյալեն և ներկայեն» գրքում զետեղել սուլթան Մուրադ Դ-ի հրովարտակը (թուրքերեն և հայերեն լեզուներով)։ Ըստ այդ փաստաթղթի, զեյթունցիները համարյա ամբողջապես ազատվել էին հարկերից ու տուրքերից, ստացել էին ինքնավարություն և այլ արտոնություններ (էջ 109)։

Գրախոսվող աշխատության հեղինակը ուղղակի գրում է. «Ու այդ հրովարտակը գոյություն է ունեցել, այդ մի այնպիսի անառարկելի իրողություն է, որի մասին վիճելն անմիտ բան կլիներ» (էջ 108, ընդգծումը մերն է— Վ. Մ.). Ավելի առաջ գնալով նա ավելացնում է, որ Զեյթունի մասին գրված աշխատությունների ճնշող մեծամասնության հեղինակները վկայում են, որ «անձամբ տեսել են այդ հրովարտակը։ Այն մինչև 1884 թվականը, այսինքն՝ Զեյթունի առաջին հրդեհը, կախված է եղել Ս. Աստվածածնա եկեղեցում» (էջ 111)։

Մեր կարծիքն այն է, որ այդպիսի հրովարտակ գոյություն չի ունեցել, և որ սուլթան Մուրադը չէր կարող երբեք Տավրոսի լեռնականներին ինքնավարություն արտոնող այդպիսի հրովարտակ տալ։ Ինչպես ասացինք, Մ. Սեմերճյանը ջանում է հավատացնել, որ սուլթանական հրովարտակը ոչնչացել է Զեյթունի 1884 թ. հրդեհի ժամանակ։ Ընդունենք, որ այդպես է եղել։ Սակայն շուրջ երեք դար եկեղեցում փակցված հրովարտակի այրվելուց հետո մի՞թե նրա այդ տեսական գոյության փաստն էլ կմոխրանար, ծանոթ չէր լինի Սսի կաթողիկոսությանը, չէր հասնի սրա միջոցով Ալիշանին և մյուսներին։ Թեև գրախոսվող աշխատության հեղինակը կշտամբում է նրանց, ովքեր վիճարկում են հրովարտակի գոյությունը, սակայն ինքն էլ ստիպված է գրելու, որ «մատենագրական հիշատակարաններում և արխիվային վավերագրերում հրովարտակի մասին մենք մինչև այսօր ոչ մի տեղեկությունների չենք հանդիպում» (էջ 109)։

Հեղինակը պնդում է, թե XVIII դարի վերջին Թուրքիայում խարխլված էր հին հոգատարությունը, գյուղում ստեղծվում էին նոր հարաբերություններ (էջ 116)։ Կամ որ XIX դարի սկզբից Զեյթունի դավառի գյուղերում չքացել էին իշխանական տները (էջ 122)։ Սակայն այդպիսի բան կարող էր տեղի ունենալ սոցիալական արմատական վերափոխությունների շնորհիվ։ Մինչդեռ Թուրքիան շարունակում էր մնալ ռազմա-ֆեոդալական պետություն, իսկ Զեյթունի համայնքի գլուխ շարունակում էին մնալ Թաղերի իշխանները։

Աշխատության երրորդ գլխում քննության են առնված Զեյթունի իշխանական տների 1830—1832 թթ. երկպառակության դրդապատճառները։ Այդ միջադեպերի ամբողջ մեղքը հեղինակը գցում է Թաղերի իշխանների վրա։ Սակայն, չժխտելով վերջիններիս հանցանքը, չի կարելի աչքաթող անել գլխավոր հանցագործներին՝ Մարաշի տեղական իշխանություններին, որոնց հաջողվեց Զեյթունում երկպառակություն առաջ բերել, թուլացնել համայնքի զինված ուժերը, որից հետո նրանք փորձեցին վերացնել Զեյթունի կիսանկախությունը։ Հայ լեռնականները վերջին հաշվով կոտրեցին թշնամու խարդավանքները, վերացրին ներքին անհամաձայնությունները։

Գրքում թույլ են լուսաբանված Տավրոսի հայության 1862 թ. զինված ապստամբության հարցերը։ Այդ հերոսական պատմությանը հատկացված է ընդամենը 6 էջ, իսկ այսպես կոչված «արքայազուն» Լևոն Լուսինյանի «գործունեությանը», որը միայն հերավոր կապ ունի շոշափված թեմայի հետ, նվիրված է 19 էջ (էջ 197—216)։

Հեղինակը, հենվելով Մ. Սեմերճյանի հուշագրության վրա, պնդում է, որ Զեյթունի 1862 թ. ապստամբության ճնշմանը և հայության ոչնչացման պլանի իրագործմանը թուրքական կանոնավոր բանակը չի մասնակցել (բացի 50 հրետանավորներից)։ Միայն բաշիբոզուկների խմբեր են եղել, որոնք եկել էին զեյթունցիների ունեցվածքը թալանելու նպատակով (էջ 170)։ Այս հարցի մասին Թուր-

Սարգսյանը գրում է. «1862 թվականի օգոստոսի 13-ին, չորեքշաբթի երեկո, արևմուտին Պայեզիտի Ահմիտ փաշան... 3000 կանոնավոր զորքերի գլուխ անցած, եկավ բնակեցավ կիրճին մեջ, Պերզնկայի ետև (ընդգծումը մերն է— Վ. Մ.)։ Անոր մտադրությունները՝ հաջորդ օրը հանկարծակի բերել զեյթունցիները» (Աղասի, Զեյթունը և իր շրջակաները, էջ 94)։ Հ. Պողոսյանը սխալվում է, երբ ժխտում է թուրքական կանոնավոր զորագնդերի մասնակցությունը Զեյթունի վրա կատարված արշավանքների ժամանակ։

Հեղինակը մերժում է Մ. Նալբանդյանի և նրա կողմնակիցների կապերը Զեյթունի ապստամբների հետ։ Նա ընդգծում է, թե իր պրոպրումներից պարզվել է, որ ոչ մի փաստաթուղթ չկա որևէ դաղտնի կազմակերպության մասին։ Իսկ ինչպե՞ս կարելի է անտեսել Մ. Նալբանդյանին Ս. Թաղվորյանի գրած նամակն ու Նալբանդյանի ծածկագիրը և Կոստանդնուպոլսի բարեգործական ընկերության գործադրած ջանքերը զեյթունցիներին զենքով և դրամով օգնելու մասին։

Գրախոսվող աշխատության հեղինակի կարծիքով, կիլիկյան դահի այսպես կոչված վերջին «ժառանգորդ» Լևոն Լուսինյանը գործնականորեն մասնակցել է Զեյթունի ապստամբությանը։ Հեղինակը ջանում է հերքել Մ. Նալբանդյանի այն վկայությունը, որով նա կտրականապես ժխտել է Լևոն Լուսինյանի Զեյթունում գտնվելու իրողությունը. «Նրա ամբողջ շրջաբերականից փչում է սուտը,— գրել է Մ. Նալբանդյանը,— քանի որ նա (Լ. Լուսինյանը—— Վ. Մ.) երբեք չի եղել Տավրոսի լեռներում, ոչ որի հետ չի կռվել և չի եղել բնավ Զեյթունում, ուր իբրև թե հրապարակված է եղել հիշյալ շրջաբերականը» (էջ 210)։

Որպես «հզոր կռվան» Հ. Պողոսյանը, հիմք ընդունելով Մ. Սեմերճյանի հուշագրությունը, պնդում է, թե «Զեյթունցու գիրքը, որտեղ նշված է այդ փաստի մասին, հրատարակվել է 1900 թ., այսինքն Զեյթունի հերոսական ապստամբությունից ուղիղ 38 տարի հետո... ուրեմն մասնակիցներից շատերը կենդանի էին, որոնց թվում նաև Մնացական Սեմերճյանը։ Մի՞թե նրանք չէին հիշում այն փաստը, թե Լևոն Լուսինյանը եղել է Զեյթունում, թե՞ ոչ։ Անպայման եղել է» (էջ 210)։

Սակայն հարց է ծագում։ Այդ ինչպես է, որ մի անձնավորություն, որն իր հուշերը թղթին է հանձնել տասնյակ տարիներ հետո, չէր կարող սխալվել, իսկ ժամանակակիցներից Մ. Նալբանդյանի (որին քաջ հայտնի էին 1850—1860-ական թթ. Կիլիկիայում—Տավրոսում կատարվող բուռն իրադարձությունները) վկայությունը պետք էր կասկածի տակ առնվի և մերժվի։

Չի կարելի բաժանել Հ. Պողոսյանի նաև այն կարծիքը, թե կաթոլիկների մուտքը Զեյթուն «լեռնականներին պառակտեց և տարաբաժանեց մասերի» (էջ 238)։ Ճիշտ է, անցյալ դարի 60-ական թթ. և նրանից հետո կիլիկիահայության մեջ կաթոլիկ և բողոքական միսիոներները ունեցան որոշ հաջողություններ։ Սակայն հայ բնակչության ստվար մեծամասնությունը հավատարիմ մնաց լուսավորչական դավանանքին։ Պատահական չէր հայ կաթոլիկ կրոնապետներից մեկի հետևյալ դառն խոստովանությունը. «...Բայց երբ հուսկ ուրեմն Զեյթունի իշխանք ետ դատերին ավարտելու, անցան առ պատրիարքն հայ-էջմիածնական և թողուցին զՀասունյան արքեպիսկոպոսը, այն ատեն Հասունյանի հրաժարելովը խնդրույն մեջեն, Նապոլեոն Գ ևս հրաժարեցավ հայնմհետե միջամտելու» (Մինաս Նուրիխան, Պատմություն ժամանակակից, Վենետիկ, 1896, էջ 830)։

Գրախոսվող աշխատությունը շատ կողմերով կշահեր, եթե հեղինակը օգտագործեր և շրջանառության մեջ դներ Մոսկվայի, Լենինգրադի և Օդեսայի կենտրոնական արխիվներում եղած նյութերը, որոնք առնչվում են հայ ազգային ազատագրական շարժման, հատկապես Սիլիկիայի—Զեյթունի պատմության հետ։

Վ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ